ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

16.11.2018թ. կնքված N ՀՀ ԱԺ ԳՀԱՇՁԲ-18/8 ծածկագրով պետական գնման պայմանագրի

«12»12. 2018թ.

ք.Երևան

ՀՀ Ազգային Ժողովի աշխատակազմը, ի դեմս աշխատակազմի ղեկավարի առաջին տեղակալ Գ. Մխեյանի, որը գործում է աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ)՝ մի կողմից, և «ԱՐՏՇԻՆ-1» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Դավթյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին /այսուհետ՝ Կողմեր/, հիմք ընդունելով 16.11.2018թ. կնքված N ՀՀ ԱԺ ԳՀԱՇՁԲ-18/8 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.15 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1 Հաշվի առնելով Պայմանագրի 4.1, 4.1.1 և 4.2 կետերը՝ Կողմերը որոշեցին «ՀՀ Ազգային ժողովի միջանցքների մանրահատակի և շրիշակների նորոգման և լաքապատման» աշխատանքների ձեռքբերման նպատակով հաստատել ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը համաձայն՝ կից ներկայացված Հավելված N 1-ի:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Սույն Համաձայնագիրը կազմված է 2 էջից, հայերեն լեզվով՝ կնքված երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Համաձայնագրի N 1 հավելվածը, համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ ԱԺ աշխատակազմ	«ԱՐՏՇԻՆ-1» ՍՊԸ
ք. Երևան, Բաղրամյան պող.19	Ք. Երևան, Կարապետյան փ. 9,
ՀՎՀՀ 00008519	«ԱՅԴԻ բանկ» ՓԲԸ
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Հ/Հ 11811006695800
Հ/Հ 900011020147	ՀՎՀՀ 01277633
ՀՀ ԱԺ աշխատակազմի	Տնօրեն
ղեկավարի առաջին տեղակալ	Ա. Դավթյան
Գ. Մխեյան	
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
«16» նոյեմբերի 2018թ. կնքված
ՀՀ ԱԺ ԳՀԱՇՁԲ-18/8 ծածկագրով պայմանագրի
«12» «12» 2018 թ. կնքված N1 համաձայնագիր

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի														
հրամանով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	**Ընդամենը**
1	45261138/501	Միջանցքների մանրահատակի և շրիշակների նորոգման և լաքապատման աշխատանքների	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	7980000	7980000

Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

ԳՆՈՐԴ
ՀՀ ԱԺ աշխատակազմ
ք. Երևան, Բաղրամյան պող.19
ՀՎՀՀ 00008519
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011020147
ՀՀ ԱԺ աշխատակազմի
ղեկավարի առաջին տեղակալ
Գ. Մխեյան

(ստորագրություն)
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«ԱՐՏՇԻՆ-1» ՍՊԸ
Ք. Երևան, Կարապետյան փ. 9,
«ԱՅԴԻ բանկ» ՓԲԸ
Հ/Հ 11811006695800
ՀՎՀՀ 01277633
Տնօրեն
Ս. Դավթյան

(ստորագրություն)
Կ.Տ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ Ազգային ժողովը ստորև ներկայացնում է իր կարիքների համար «ՀՀ Ազգային ժողովի միջանցքների մանրահատակի և շրիշակների նորոգման և լաքապատման» աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ԱԺ ԳՀԱՇՁԲ-18/8 ծածկագրով գնանշման հարցման գնման ընթացակարգի արդյունքում 2018 թվականի նոյեմբերի 16-ին կնքված ՀՀ ԱԺ ԳՀԱՇՁԲ-18/8-1 պայմանագրում 2018 թվականի դեկտեմբերի 12-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթերի պատճենները:

Փոփոխության առաջացման պատճառ՝	Պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիմքով և ներկայումս առկա են ֆինանսական միջոցներ:
Փոփոխության նկարագրություն՝	Աշխատանքի ձեռքբերման նպատակով հաստատվել է ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը:
Փոփոխության հիմնավորում՝	Պայմանագրի 4.1, 4.1.1 և 4.2 կետերի հիմքով

Պատվիրատու՝ ՀՀ Ազգային ժողով: